

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 14.3/[31377]-10

Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի նիստի

ք. Երևան

10.02.2010 թ.

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - ՀՀ վարչապետ (խորհրդի նախագահ)

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

- Ա. Քարամյան ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ (խորհրդի նախագահի տեղակալ)
- Վ. Տերտերյան ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
- Ա. Ասատրյան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
- Ա. Ավետիսյան ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
- Վ. Արամյան ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
- Է. Բաբայան ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
- Ա. Ղուկասյան ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
- Ա. Նազարյան ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ
- Ս. Պետրոսյան ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ
- Ա. Պողոսյան ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ
- Է. Թումանյան Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի, սպորտի, երիտասարդության հարցերի և տուրիզմի վարչության պետ
- Լ. Նալչաջյան «Ակտիվ երիտասարդ քաղաքացիների նախաձեռնություն» հասարակական կազմակերպության փոխնախագահ
- Ա. Մխիթարյան «Երիտասարդական ակումբների դաշնություն» հասարակական կազմակերպության նախագահ
- Է. Մանանդյան «Նոր Հայաստան» հումանիտար աջակցության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ
- Ա. Թադևոսյան «Թրեյներների ազգային թիմ» հասարակական կազմակերպության նախագահ

Է. Հակոբյան	«Ազատ հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպության նախագահ
Դ. Դավթյան	Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսանողական խորհուրդ
Ց. Ակոպյան	Երևանի պետական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ
Հ. Ափյան	Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ
Գ. Իսկանդարյան	Երիտասարդ առաջնորդների դպրոցի կոորդինատոր
Ա. Ուղումյան	Երիտասարդության սոցիալական և զբաղվածության հարցերի գծով փորձագետ
Ռ. Մարկոսյան	Եվրախորհրդի Երիտասարդության և սպորտի տնօրինության դասընթացավարների խմբի անդամ (խորհրդի քարտուղար)
Մ. Մովսիսյան	«Երիտակ» հասարակական կազմակերպության անդամ
Ա. Հակոբյան	«Հզոր հասարակություն» հիմնադրամի գործադիր տնօրեն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական երիտասարդական քաղաքականության արդի վիճակը և հնարավոր զարգացման միտումները

(զեկուցող՝ Ա. Քարամյան)

2. Խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագրի քննարկում: Խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագրի նախագիծը նախապատրաստելու նպատակով աշխատանքային խմբի ձևավորում:

(զեկուցող՝ Ա. Քարամյան)

3. Խորհրդի աշխատակարգի մշակման նպատակով աշխատանքային խմբի ձևավորում:

(զեկուցող՝ Ա. Քարամյան)

4. Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված՝ հասարակական կազմակերպությունների կողմից դրամաշնորհային ծրագրերի հայտերի համացանցային ուղիղ "օնլայն" ռեժիմով ներկայացման, մրցութային ընտրության և դրամաշնորհների տրամադրման նոր՝ հրապարակային, թափանցիկ և արդիական համակարգի ներկայացում

(զեկուցող՝ Ա. Քարամյան)

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ՝

1. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա.Քարամյանը հանդես եկավ ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության արդի վիճակի և հնարավոր զարգացման միտումների մասին համառոտ զեկույցով: Զեկույցում շեշտվեցին ազգային երիտասարդական քաղաքականության ներկա վիճակի հինգ դրական և հինգ բացասական կողմերը: Մասնավորապես, դիտարկվեցին առկա իրավական փաստաթղթերի հենքը, բյուջետային հատկացումները, գործող մարզային կենտրոնները, 2007թ. երիտասարդության ազգային զեկույցը, վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհուրդը և առավել կարևորվեց աշխատանքը հատկացվող միջոցների արդյունավետ օգտագործման, ՀԿ հատված – պետություն համագործակցության, ոչ ֆորմալ կրթության զարգացման ու նորարարական մոտեցումների խթանման ուղղությամբ:

2. Խորհրդի գործունեությունը հնարավորինս համակարգված կազմակերպելու նպատակով առաջարկվեց մշակել խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագիր, որը իր մեջ կներառի խորհրդի կողմից իրականացվող հիմնական աշխատանքային ուղղությունները, դրանցում վերհանվող խնդիրները, ակնկալվող արդյունքներն ու նախանշված ժամկետները: Առաջարկվեց ձևավորել համապատասխան աշխատանքային խումբ:

3. Ներկայացվեց, որ համաձայն Խորհրդի կանոնադրության 12-րդ կետի խորհուրդն իր աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու նպատակով կարող է ընդունել աշխատակարգ: Միաժամանակ կարևորվեց նման աշխատակարգի ընդունումը, որը հնարավորություն կընձեռնի խորհրդի բոլոր անդամներին առավել արդյունավետ մասնակցել խորհրդի աշխատանքներին: Առաջարկվեց ստեղծել աշխատանքային խումբ խորհրդի աշխատակարգը մշակելու նպատակով:

4. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա.Քարամյանը իր զեկույցում կարևորեց երիտասարդական պետական քաղաքականության իրականացման համար պետական բյուջեով նախատեսված միջոցների արդյունավետ օգտագործման խնդիրը: Նշվեց, որ այդ միջոցներից շուրջ 60 մլն. դրամը նախատեսվում է տրամադրել հասարակական կազմակերպություններին՝ դրամաշնորհային ծրագրերի իրականացման նպատակով: Այս աշխատանքները առավել թափանցիկ ու հրապարակային իրականացնելու, հաշվետվողականությունն ու արդյունավետությունը բարձրացնելու, նպատակով մշակվում է դրամաշնորհային ծրագրերի հայտերի համացանցային ուղիղ «օնլայն» ռեժիմով ներկայացման, մրցութային ընտրության և դրամաշնորհների տրամադրման նոր համակարգ, որը կներդրվի 2010 թվականին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագրի նախագիծը նախապատրաստելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ և հաստատել խմբի կազմը:

2. Խորհրդի աշխատակարգի նախագիծը նախապատրաստելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ և հաստատել խմբի կազմը:

3. Ի գիտություն ընդունել Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված՝ հասարակական կազմակերպությունների կողմից դրամաշնորհային ծրագրերի հայտերի համացանցային

ուղիղ «օնլայն» ռեժիմով ներկայացման, մրցութային ընտրության և դրամաշնորհների տրամադրման նոր համակարգի մասին հաղորդումը:

4. Առաջարկել պետական լիազոր մարմինին՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը, մինչև մարտի 5-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված՝ հասարակական կազմակերպություններին տրամադրվող դրամաշնորհային ծրագրերի հիմնական առաջնայնությունները (2010 թվականի համար):

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՌՈՒԲԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

10 փետրվարի 2010 թվականի N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՄՇԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կանոնադրության 12-րդ կետով՝ Խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագրի նախագիծը նախապատրաստելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Ա. Քարամյան - խմբի ղեկավար, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ (խորհրդի նախագահի տեղակալ)

Ռ. Մարկոսյան - Եվրախորհրդի երիտասարդության և սպորտի տնօրինության դասընթացավարների խմբի անդամ (խորհրդի քարտուղար)

Լ. Մարտիրոսյան - ՀՀ Նախագահի օգնական (խորհրդի անդամ)

Ա. Թադևոսյան - «Թրեյներների ազգային թիմ» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)

Ա. Մխիթարյան - «Երիտասարդական ակումբների դաշնություն» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)

Ա. Հակոբյան - «Հզոր հասարակություն» հիմնադրամի գործադիր տնօրեն

Ա. Սողոմոնյան - ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչության պետ

2. Հանձնարարել աշխատանքային խմբին մինչև 2010 թվականի մարտի 5-ը խորհրդի անդամներին ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագրի նախագիծը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՌՈՒԲԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

10 փետրվարի 2010 թվականի N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ
ՄՇԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կանոնադրության 12-րդ կետով՝ Խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

3. Խորհրդի աշխատակարգի նախագիծը նախապատրաստելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Ա. Քարամյան - խմբի ղեկավար, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ (խորհրդի նախագահի տեղակալ)

Է. Բաբայան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ (խորհրդի անդամ)

Ռ. Մարկոսյան - Եվրախորհրդի երիտասարդության և սպորտի տնօրինության դասընթացավարների խմբի անդամ (խորհրդի քարտուղար)

Է. Մանանդյան - «Նոր Հայաստան» հումանիտար աջակցության կենտրոնի հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)

Է. Հակոբյան - «Ազատ հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)

Մ.Մովսիսյան - «Երիտակ» հասարակական կազմակերպության անդամ

Ա. Սողոմոնյան - ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչության պետ

4. Հանձնարարել աշխատանքային խմբին՝ մինչև 2010 թվականի մարտի 5-ը խորհրդի անդամներին ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի աշխատակարգի նախագիծը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՌՈՒԲԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ